ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԵԼՔ» ԽՄԲԱԳՅՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՏԻԿԻՆ Ա. ԲԱԽՇՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Բախշյան.

Ի պատասխան Ձեր՝ 02.03.2018թ. հ.Ե-3/136 գրության, տեղեկացվում է.

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ գույքահարկ վճարող են համարվում Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, միջազգային կազմակերպությունները և դրանց կողմից Հայաստանի Հանրապետությունից դուրս ստեղծված կազմակերպությունները, Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք, որոնց Հայաստանի Հանրապետության տարածքում պատկանում է հարկվող օբյեկտ համարվող գույք, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների և հիմնարկների: Համաձայն 8-րդ հոդվածի 1-ին կետի՝ գույքահարկի գծով պարտավորությունն առաջանում է գույքահարկով հարկվող օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման ամսվան հաջորդող ամսվա 1-ից, և դադարում է գույքահարկով հարկվող օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքը դադարելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից, իսկ համաձայն 2-րդ հոդվածի՝ գույքահարկը սեփականության իրավունքով պատկանող, հարկվող օբյեկտ համարվող գույքի համար սույն օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից: Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացվում է, որ անկախ անշարժ գույքի վարձակալությամբ տրամադրված լինելու հանգամանքից, գույքահարկը հաշվարկվում է անշարժ գույքի սեփականության իրավունքի ծագման ամսվան հաջորդող ամսվա 1-ից և ենթակա է կատարման գույքի սեփականատիրոջ կողմից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ